


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 ՄԷԸ.
Պաշտոնաց 10 ՄԷԸ.
Վեցամս. Կ. Պոլսոյ 4 ՄԷԸ.
Պաշտոնաց 5 ՄԷԸ.
Օտար երկիրներու 30 ՊԷ.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դրշ է. աւելի անգամներու
համար գաւ սակարկութիւն կըլ-
այ :
Խորացանչիւր թիւ 2 դրշոց թուղի :



ԼԵԱՔԵՐ

ՀԱՆՐԱՊԱՊԱՆՈՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց ճանրու-
ած արքայ խմբագրութեան վրայ է :
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խմբագիր
— Տնօրէնին պիտի ուղղուի, զայս
թիւ Սանտրքըրար շատուի թիւ
198, Նորո խան, Մասիսի գրասեն-
եակը :
Ճանրու ծախքը չիճարուած նա-
մակ չընդունուիր :
Չտպուած նամակ, յօդուած, և
ետ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 31 ՅՈՒՆԻԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կաղաքական թան լրագիրն Արեւ-
ելեան բուժելի կադմալորութեան
դաստիարակչական օրինաց առաջին երեք դը-
լուներն հրատարակելով կըսէ թէ
յանձնախորհրդին այս փորձն իւր ի-
մաստութեան, ազատամտութեան և
երկրին վիճակին քաջածանօթ լինե-
լուն անժխտելի ապացոյց մ'է :

« Որոշեալ տրամադրութիւնները,
կըլարէ յիշեալ թերթը, Պէրլինի դաշ-
նադրութիւնն յարգելով հանդերձ,
երկրին ժողովուրդն ամեն քմահաճ
և բռնական ձեռնարկութիւններէ ա-
պահովելով, իրենց աշխատութեանց
պտուղներն և ազատ ժողովրդոց ա-
մեն իրաւունքները խաղաղութեամբ
վայելելու վիճակի մէջ կը դնեն : Վեր-
ջապէս այսպիսի պայմաններ կուտան
անոնց, որ այսու հետեւ իրենց մտաւո-
րական դարգացումն և նիւթական բա-
րօրութիւնն իրենց անձնական փու-
թալանութեան միայն կախում պիտի
ունենայ : »

Ահաւասիկ յիշեալ օրինաց առա-
ջին երեք դըլուներուն թարգմանու-
թիւնը :

ԳԼՈՒԽ Ա.

Նահանգին հասարակայնն էրաւորը

Յօդ. 1. — Արեւելեան բուժելի Սուլ-
թանին քաղաքական և զինուորական
ուղղակի իշխանութեան ներքեւ դըր-
ուած նահանգ մ'է՝ վարչական ինքնօ-
րինութեան պայմաններով :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԵՐԹՈՆ *

ՊԱՐԱԶԱՆԴԻՍ ԳՊՈՅՍԱՐԱՅ-ԱՐԵՒԵԼԻ-
ԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հայ երիտասարդութիւնն իւր երկ-
րորդ պարահանդէսն տուաւ . պիտի
ասեի՝ իւր երկրորդ յաղթանակն տա-
րաւ : Եւ ստուգել յաղթանակ, ինչ
փայլուն երեկոյթ՝ Գպրոցասիրաց-Ա-
րեւելեան ընկերութեան պարահան-
դէսի երեկոյթն որ Արարատեանի ե-
րեկոյթին քոյրն էր, բայց, շատերու
վիսպութեան համեմատ, իւր անդրա-
նիկ քրոջմէն աւելի շէ, աւելի հրա-
պուրիչ : Կը թողում պատմել կարգա-
դիր Մասնաժողովոյ Պատ. անդամոց
ջանքն, Սեօքին Բրիտանիոյ վեհմ.
Դեսպանին և Դեսպանուհւոյն եղած
աղնուական ընդունելութիւնն, « Կո-
ստանդուպոլիս » որ բոլոր բաղմոթիւ-
նը ոտը հանեց, և քօփէրներու-կայ-

Յօդ. 2. — Արեւելեան բուժելի սահ-
մանները Պէրլինի դաշնադրութեան
14րդ յօդուածով որոշուածներն են,
հանդերձ այն ուղղութեամբ, զորս
սահմանները դժեւու պաշտօն ունե-
ցող Եւրոպական յանձնախումբն որո-
շած է :

Յօդ. 3. — Սուլթանը նահանգին
ցամաքային և ծովային սահմանադը-
լութիւններուն պաշտպանութիւնը կըճ-
դայ ըստ տրամադրութեան Պէրլինի
դաշնադրութեան 13 և 16րդ յօդուա-
ծոց :

Օսմանեան զորքերն յիշեալ յօդ-
ուածոց յուցած պարագայից մէջ և
տրամադրած պայմաններուն համե-
մատ միայն կրնան մանել յիշեալ նա-
հանգը :

Յօդ. 4. — Ոչ սահմանադրուող պահ-
պանութեան, ոչ ալ նահանգին ներ-
քին բարեկարգութեան պահպանու-
թեանը համար (յօդուած 3. հատ-
ւած 2) Պաշտպանութեանը և ջէր-
քէներու պէս անկանոն զորքեր չը
պիտի դորձածուին :

Յօդ. 5. — Նահանգին մէջ ջէր-
քէներու գաղթականութիւն երբեք
չը պիտի կրնայ հաստատուիլ :

Յօդ. 6. — Տեղական զինուորու-
թեան մէջ ծառայութիւնը պարտա-
ւորական է Արեւելեան բուժելի սահ-
մաններուն համար՝ յիշեալ զլրոյն
մէջ որոշուած պայմաններով :

Արեւելեան բուժելի բնիկներն
Օսմ. բանակին զինուոր դուրսելու չեն
կրնար բռնադատուիլ, բայց իրենց ձեռ-
քն է Օսմ. զինուորական վարժարա-
նաց դասերուն հետեւի կամ Օսմ.
զորագուները մէջ զինուորիկ բաւա-
կան է որ նահանգին ազգային զին-
ւորութեան դորձօն ծառայութեան

տուժաններուն մէջ դեռ արձանագ-
րուած չլինին, կամ զինուորական ծա-
ռայութենէ դադարած լինին :

Օսմ. վարժարանաց կամ զորագըն-
դոց մէջ անցած ժամանակը նահան-
գին մէջ նոյն տեւողութեամբ ծա-
ռայութեան տեղ պիտի հաշուի :

Պէտէլութը — առքերիէ կոչուած
տուրքը ջնջուած է Արեւելեան բու-
ժելի նահանգին մէջ :

Յօդ. 7. — Սուլթանը նահանգին
մէջ իրեն ներկայացուցիչ ունի քրիս-
տոնեայ ընդհանուր կառավարչի մը,
զոր հինգ տարուան համար կանուա-
նէ՝ Պէրլինի դաշնադրութիւնն ըս-
տորադրող տէրութեանց հաւանու-
թեամբ :

Սուլթանն ընդհանուր կառավար-
չին առաջարկութեամբ ընդհանուր
քարտուղար մը կանուանէ, նոյնպէս
քրիստոնեայ, որ պաշտօն ունի ընդ-
հանուր կառավարչին փոխանորդել-
կերպով նա արգելք մ'ունենայ, և անոր
մեռած կամ հրաժարած ժամանակ տե-
ղակալել, մինչև որ յաջորդն անուա-
նի, կամ այնպիսի ծանր հիւանդու-
թեանց ժամանակ որ պաշտօնը չա-
րունակելու անհնարութեան մէջ դը-
նեն զընդհանուր կառավարչը :

Ընդհանուր քարտուղարի անուան-
ման համար ընդհանուր կառավարչին
երեք ընտրելիներուց մէկը կը ներ-
կայէ Բ. Գրան, և Սուլթանն այն ցան-
կին մէջէն իւր ընտրութիւնը կրնէ
միանայ պայմանաւանդ մէջ, որոյ
լրանալէն յետոյ ընդհանուր կառա-
վարչին իրաւունք ունի ինքնին կա-
տարել անուանումը և վերջ. Սուլթա-
նին ծանուցանել :

Ընդհանուր կառավարչը Սուլ-
թանին հաւանութեամբ կանուանէ

վարչական գործոց ընդհանուր տնօ-
րէններն, արդարութեան դերագոյն
ատենին դատաւորներն, ինչպէս նա-
և դատաւաց կառավարչները : Սոյն
հաւանութիւնը կայսերական հրովար-
տակաւ մը կը տրուի : Եթէ, ընդհա-
նուր կառավարչին ըրած անուանումը
Բ. Գրան ծանուցուելէն մինչև մէկ ա-
միս Սուլթանն իւր որոշումը չլայտնէ,
հաւանութիւնը տրուած կը համար-
ւի : Տնօրէնի մը, արդարութեան
բարձրագոյն ատենի դատաւորի մը
կամ կառավարչի մը պաշտօնը թա-
փուր մնացած ժամանակ, ընդհա-
նուր կառավարչին այն պաշտօնին հա-
մար մէկը կը կարգէ առ ժամանակեայ
կերպիւ : Սուլթանը կանուանէ ազգա-
յին զինուորութեան և ոստիկանու-
թեան զորավարներն և բարձրագոյն
սպայները : Մշտնջենաւոր կերպիւ ի-
րաւունք կուտայ ընդհանուր կառա-
վարչին՝ մինչև հարկւար պետի ատու-
ման ունեցող ստորակարգեալ սպայ-
ներն անուանելու : Պէրլինի դաշնադ-
րութեան 15րդ յօդուածին մէջ յիշ-
ւած սկզբանց համեմատ :

Ներկայ յօդուածին մէջ յիշուած
պաշտօնատարք և սպայք կրնան պաշ-
տօնէ ձգուիլ իրենց անուանման հա-
մար տրամադրեալ ձևերով և պայ-
մաններով :

Յօդ. 8. — Արեւելեան բուժելի մէջ
դատաւորը յանուն Սուլթանին վճիռ-
կուտան :

Յօդ. 9. — Սուլթանն Արեւելեան
բուժելի մէջ դատաւարտեցող կեան-
քը շնորհելու և ներելու իրաւունք
ունի :

Յօդ. 10. — Արեւելեան բուժելի
մէջ նահանգային ժողով մը հաստատ-
ուած է՝ գլխաւորապէս ընտրեալ ան-

նական պէտք մի է մարդոյն . այն
ձևը, այն շարժումը, այն ոստիկանը
և ծածանմանը բացատրութիւններ
են հոգւոյ զղացմանց և կրից, ինչ-
պէս երաժշտութիւնն, ինչպէս խօս-
քն : Մարդն պարող կը ծնի, ինչ-
պէս երգող, ինչպէս խօսող, մանուկն
երբ ուրախութիւն մի ունի՝ կը ցատ-
կէ, կ'ստատոսէ, կը կայթէ, կը պա-
րէ : Հին ժամանակներէ ցայսօր մար-
դիկ պարած են . աղնուականն ցլի-
նականն՝ ամեն կտրուկ մարդիկ իւր-
եանց պարն ունին, գիւղացին երբ
իւր հնձոց դէպք կը բարդէ, կը կայ-
թէ ինդուգին նորա բոլորտիքն . զօ-
րականն պար կը բռնէ գիւղացին
խարուկին շուրջն, և տապանակին
առջեւէն կերթայ Գաթիթ պարաւոր :

Հնութեան մէջ պարն մի կրօնա-
կան կերպարան ունէր, նուիրական
օրարանցիկներու դասակներ կային,
զորս կը յիշեցնեն դեռ Պոյսաթէթ ի
Հնդկաստան, Աւսթրալիայի լայնութիւն
իսկ կը պարէին, և կենաց ամեն պա-

* Գաղգ. Ֆէյլթիմ :

դամներէ, որք ընդհ. կառավարչին հետ համաձայնութեամբ իրաւունք ունին իրենց ձեռնհասութեան յատկացեալ նիւթոց վրայ օրէնսդրելու: Սոյն ժողովն որոշուելիք ձեւերով մնայուն մասնախորհուրդ մը կանուանէ, որ ընդհ. կառավարչին քով վարչական խորհրդոյ տեղ կը բռնէ: Ընդհ. կառավարիչը մնայուն մասնախորհրդի գլխի կարծիքը կառնու բոլոր այն գործոց համար՝ որք ներկայ օրինաց պարզ գործադրութեան շրջանակէն դուրս կ'ենեն:

Մնայուն մասնախորհուրդը կրնայ ընդհանուր կառավարչին հետ համաձայնութեամբ հասարակայնի վարչութեան վերաբերեալ կանոնադրութիւններ հաստատել՝ օրինաց գործադրութիւնն ապահովելու կամ անհրաժեշտ պէտքեր գոհացնելու համար:

Յետք է նշել

Կը յիշեն ընթերցողք թէ ասկէ առաջ լրագիրները զրոյց մը հրատարակած էին իւր թէ Ռուսիա՝ պատերազմական տուգանաց վճարումէն առաջ թուրքոյ հետ նոր փոխառութիւն մը կնքուելուն կը հակառակի: Փարիզ հրատարակուող երկամսական կարեւոր թերթ մ'այս զրոյցը հերքելով կըսէ թէ, ընդհակառակն, ամենէն առաջ Ռուսիա կը փախաբի որ Օսմանեան կառավարութիւնը փոխառուներ գտնէ, որովհետեւ յայտուելի թէ այս անգամ կրնայ ուղղակի բանակցութեան մոտեցիլ Անգլիոյ հետ, որ Օսմ. կառավարութեան յայտնի խնամակալն է: Հասկնալիս է որ, կըսէ յիշեալ լրագիրն, հետեւեալ հիմանց վրայ Անգլիոյ և Ռուսիոյ միջև համաձայնութիւն մը գոյանայ Օսմանեան տաղգայ փոխառութեան նկատմամբ, այն է՝ Եգիպտոսի տուրքով երաշխաւորեալ փոխառութիւններէն զատ միւս բոլոր Օսմանեան պարտքը միացնել, դրամադրելոյն և տոկոսին երկու երրորդը զեղչելով նոր պարտք մը կազմել և այս նոր պարտքին արժեքը թուրքական տեսակէն 800 ֆիլիսին ֆրանքի փոխարէն արժեքի մը հանել որ է Ռուսիոյ պահանջած պատերազմական տուգանաց մերձաւորագոյն արժողութիւնն:

Արեւելեան կաթոլիկ Հայոց և Հրեանի ակնարկն միջև ծագած անհամաձայնութիւնն այս օրերն նորէն խնդրոյ նիւթ եղած կերելի:

« Բէվերիոս րիւս անուն պապական կոնգրակին գործադրութեան պատու

ճառաւ. վարկիւնէն բաժնուող Կ. Պոլսոյ կաթոլիկ Հայերը վերադառնալով պապական եկեղեցւոյն ծոցը բերելու համար սկսած բանակցութիւններն ապագային երան, կըսէ Հռոմի իթուալիս լրագիրն, հակառակ բոլոր այն զիջմանց, զորս վատիկան կըցաւ անոնց ընդդ. ուստի այսուհետեւ վախճանի մը համեմատ բոլոր յայտը կրնաւ ընդհ. Մ. յ. մ. վերջին փորձ մ'ալ պիտի լինի Պապին կողմէ, որ կողմէ վերջնական յորդոր մ'ուղղել յիշեալ հերձաւածը Հայոց, որք Գիւրէիւնիսթ մանուկ ճանչուած են, որովհետեւ իրենց Պատրիարք ճանչուած են զԳիւրէիւնիսթէն: Մ. յ. մ. փորձն ալ եթէ անյաջող ելնէ, Գիւրէիւնիսթի պիտի բանադրուին Պապական յատուկ կոնգրակու մը: Իսկ հաւատարիմ մնացած մասը պիտի շարունակէ Պատրիարք ճանչել Գիւր. Հասունը:

« Մ. յ. մ. այն անհամաձայնութիւնն՝ որ քանի մը տարիներ առաջ ծագած էր, կատարեալ հերձուածի մը պիտի յանգի, և ո՛չ փախաբեալ հաշտութեան:

« Գալով կաթոլիկ Հայոց ամբողջ հատարակութեան վերաբերեալ գոյնց և կալուածոց, զորս Գիւրէիւնիսթի իրենց յատկացուցած են, վատիկան ուղղակի Օսմ. կառավարութեան պիտի դիմէ, թէպէտ Բ. Գոս. արդէն հրատարակած է թէ հերձուածողք իրաւունք ունին կաթոլիկ հատարակութեան կալուածոց մէկ մասին վրայ, քանի որ ասկէ առաջ նոյն հատարակութեան անդամ էին և հիմա բաժնուիլ կուզեն: Եթէ Օսմ. կառավարութիւնն այս տեսակեցոյն վրայ պնդէ, Հռոմի ակնարկն է՝ Գիւրէիւնիսթիներուն և թէ՛ Օսմ. կառավարութեան այս ընթացքին դէմ բողոքելով պիտի բաւականանայ: »

Հռոմէն լուր կուտան, կըսէ Մէսէնճըր, թէ Օսմանեան կառավարութիւնն ընդունել է պապական Բէվերիոսի կողմէն կոչուած կոնգրակն, որ արեւելեան կաթոլիկ պատրիարքաց և եպիսկոպոսաց ընտրութիւնները կը կարգադրէ: Սոյն որոշման վրայ, Քաղզէացի (Գիլտանի) Պատրիարքին ընտրութիւնը կատարեալէս ընդունուած է:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ (ՀԱՎԱՍ)

Բրէվէլա 9 փետր. Թուրքո-Հնդկական յանձնադրոյն երկի (չարաթ օրը) կէս օրէն ծամ մը յետոյ դուրսեցաւ:

տահարաց յատուկ մի պար կայր, մինչև իսկ մեռելոց պարք: Մ. յ. մ. իսկ ինչ կընեն քահանայք երբ ի թափոր կը շրջին կամ մի անգամ տան կը կատարեն, եթէ ոչ՝ մի սրբազան պար կը գծեն Բայց սեռերու խառն պաշտոն, բայց անբարոյականութիւնն... ո՛հ, ո՛հ, երբ ընկերութիւնն ապականեալ է, ամենէն նուիրական հաստատութիւնը իսկ կարեն միջոց լինի տպականութեան. նոյն իսկ եկեղեցին, ուր կրօնի պաշտօնեայն կարէ ցանկանալ մի կնոջ որ կուգայ նորա օրհնութիւնն խնդրել... Բայց այս խնդիրն կարէ զիս շատ հեռուներն տանիլ. իմ միտքն հոս Մանգոլ մէկ քրիստոնէութիւնն քննադատել չէ, ապա թէ ոչ՝ դեռ կարէի ուրիշ կողմերէ նկատել խնդիրն և հաստատել թէ պարահանգէսն արդի ընկերութեան համար մի պէտք իսկ է, մի բնական հետեւանքն արդի մարդկային քաղաքակրթութեան:

Դառնալով մեր պարահանգի խնդիրն,

այո՛, ամենէն գեղեցիկներէն մին էր: Մ. մ. մէկն աւելի գիտաւորաւ արժանի են սա գոյնգոյն հանդերձներն. սա մի թերթահայ կերպարանն է բզդեցիք՝ ոսկեծօյլ ու շեղակի գոյն խալին ի գլուխ, և անկիւնը կտաւ կայ շապիկն երկայնածիք թեղանեաց մէջէն ճախարակեաց ճերմակ դաստակն կը փայլէ իւր լայն տերեւոյ մէջ բացուած մի ծաղիկ. այն մի թուրքապաշտ միտքով մեռաւորաց լայն քաղի մի մէջ, որոյ մէջէն դուրս սպողող փայտակ ձեռք մի միայն կը մտնէ այն ծաղից մէջ ծածկեալ մարմնոյն փափկութիւնն. դա մի ալ ժերուհի է, նա մի հնդկուհի՝ գլուխն ու վիզն ոսկի դրամներու շարերով զարդարուած, այս մի պարտիզլուհի է, այն մի կրօնուհի: Երբ բարեկամներէս մին որ քովս էր՝ տեսու գլուխեան քեռ. այն կերպարանքն իւր խալովն ի վզին, - բոտ. « Մ. հա ինչ որ չեմ սիրեր, - ծաղիկը կրօնական հանդերձներն: » - « Բայ, պա-

վարդաց փոխանակութենէն յետոյ, Գալի Ամիտ Մուխթար փաշան զիտել տալով թէ իրեն հրաման չէր եղած Պէրլինի դաշնագրութեան նախատեսած հիմանց վրայ բանակցելու, և Հնդկն պատուիրակներն ալ յիշեալ հիմանց վրայ բանակցելու համար պնդելով, նիտար վերցաւ՝ առանց համաձայնութիւն գոյանալու:

Յանձնախորհուրդը վերադառնալով փոխ դուրսի վաղը:

Մ. յ. տարաք հասած հեռագիրք

1 օտարա, 11 փետր. առաւօտ. Բարեկոչոյ Գլուխէն (Սիւրիէ) եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Զուլուհերու * ցեղին գէմ գործող Անգլիական զորադուռն յաղթուել և գրեթէ ջնջուել է: Յիշեալ զորադուռն 100 սայլ պաշար, 1000 եղն, 2 թնդանօթ, 1 դրոշ, 100 հրացան և մեծ քանակութեամբ ռազմավորք կորսնցուցեր է:

Նախալ վտանգի մէջէ. կառավարիչն օգնութիւն խնդրեց Անգլիայէն:

Պէրլին 11 փետր.

Պաշտօնադէս սուտ կը հանուի այն լուրը թէ Գերմանական կառավարութիւնը մտադիր է անմիջապէս զինուորական շղթայ հաստատել Ռուսական սահմանադիմին վրայ:

1 օտարա 11 փետր. երեկոյ

Նախարարութիւնն որոշեց այսօր Բարեկոչոյ գլուխը 6 վաղտ հետեւակազոր, երկու դուռն հեծեալազոր, 12 թնդանօթ և այլ և այլ ծառայութեանց համար 5 վաղտարտակ զրկել:

1 օտարա 11 փետր.

Օսմ. Գոն.	42 3/8	
Փոլ.	4865	46 1/2
»	4869	45 7/8
»	4871	53 1/4
»	4872	24 1/2
»	4873	44 1/4
Եգիպտ.	68 5/8	
Անգլ. Գոն.	96	1/46

Փարիզ 11 փետր.

Օսմ. Գոն.	12,57	1/2
Գաղղ. Գոն.	50/0	77,45
»	»	Նոր 80,15
»	»	50/0 112,95

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Կայսերական հրամանաւ՝ վոյեյնաւախմբին հրամանատար Հասան Հիւսնի փաշան ծովակալութեան խորհրդոյն նախագահ անուանեցաւ:

Յիշեալ խորհրդոյն երկրորդ նախագահ Մէհմէտ փաշան վոյեյն նախագահ:

* Կը յիշեն ընթերցողք թէ ասկէ աւելի մ'առաջ Բարեկոչոյ գլուխն Անգլիական իշխանութիւնը Զուլուհերու թագաւորին վերջնագիր մը զրկած էր, որ մերժուեցաւ: (Ծան. Խմբ.)

նախաւ մը ին հրամանատար անուանեցաւ:

Նոյն խորհրդոյն անգամ Տիւրքիոյ վաշան Կ. Պոլսոյ նաւահանգիստին վերաբերեալ անուանեցաւ:

Ինչպէս որ երէկ կը կատարէինք, Ռուսական վերջին դաշնագրութեան վրայ վաղեմի տուած անգլիական իշխաններուն ճիշդ չլինելը նոյն ինքն վաղեմի կը խոստովանի իւր այս առաւօտեան թերթին մէջ:

Հետեւեալ հարկ կըլլայ 15 օր սպասել մինչև պաշտօնական պատճէնին հրատարակումը:

Փանտարան կոչուած ոստիկանութեան կազմութիւնը մեծ փոփոխութեամբ կը տարուի, և կը թուի թէ կայսերական կառավարութիւնը բաւականորոշմանց գործադրութեան ըսկըքնակէտ պիտի ընէ այս բանը:

Յիշեալ ոստիկանութիւնն մայրաքաղաքիս համար արդէն վաղտ մը կազմուած է: Ամեն վիլայէթներու համար ալ տոյն ոստիկանութիւնն մէկ մէկ դուռն պիտի կազմուի՝ յատկապէս ընտրեալ գնդապետի մը հրամանատարութեան ներքին:

Կրուել թէ Աւստրիական կառավարութիւնը կը պահանջէ Պէրլինի դաշնագրութեամբ իրեն արուած արտօնութեան համեմատ զինուորական ուղիներ շինել Նօլի-Պալարի գաւառին մէջ:

Բեդրասպուրի Օսմ. դեսպանատան նախորդ առաջին քարտուղար Արիսթարքի պէյ թուրքո-ռուսական վերջին դաշնագրութիւնն Արիսթարքի կայսեր վաւերացման ներկայացնելու պաշտօն ստանալով, վաղը մայրաքաղաքէս պիտի մեկնի ի Բեդրասպուրի:

Վաղեմի իւր այս առաւօտեան թուոյն մէջ հաւատարմեցաւ կը ծանուցանէ թէ Պ. Թօքլիլի ներկայացուցած դրամադրութեան Բ. Դրան հակառակարկութեանց վերջնական պատասխան մը պիտի տան յառաջիկայ երկուշաբթի օրն, որով գործին վախճանը դաշնագրութեան կը լինի:

Անգլիոյ խորհրդարանն յառաջիկայ երկուշաբթի օրը պիտի բացուի:

Շքաւորայէն եկած հեռագիրը կը ծանուցանեն թէ Բատկոբլիցայի պարսպուելն և Գարատաղլուց յանձնուելն առանց ընդդիմութեան կամ խրոշ

ինչ որ կայ ամենէն աւելի գեղեցիկ մարդկային դէմքն: Երբ Էւս հերարձակ կը դարձնէ արագ զուգարարից շրջանակն, կամ Էւս իւր երկրաչափական ձեւերն կը յօրինէ ու կը զննէ միջոցին մէջ, մարդ կը վաղանի թէ աբանց թեւակից այդ ոգիք դէռ են թէ հերշտակ իւրեանց ձեւերն ու տատանմանը այնքան փափուկ են ու չնորհալից, բայց այնքան քստմունքն իւրեանց դէմքն: Բայց ոչ կը հասկնանամ թէ մի բոլորովն անդիման պարահանգէս չարիտ ունենար մի և նոյն վիպական հրապոյրն. խորհուրդն միշտ յանկուցիչ է, և դուռն չակել՝ մի անբարոյաւորի հաճոյք է մարդկային մտքին համար: Սիւնիքս ներու առջև կանգ առնուել և երբեք մըն իդիպոս մ'ըլլալ՝ ինչ հեշտութիւն: Ընկերութիւններն երբեքն ալիպիս անխու պահանջումներ, իրատ կապեր, տաղաւի նկատմաններ գրած են մարդոյ վերայ, որ մարդ՝ կարծես՝ յաճախ, ընկու հա-

վերջինս Կատարու երէ : Բաղկորի-
ցայէն , Սրբայէն և Զապրիւրէն գաղ-
թող խալմի Ժողովուրդը Շրջառա-
յցուած են :

Ռոսիոյ մէջ ճարտարական ժանտախ-
տին Գաղղիա մասին արդիւնքը հա-
մար Մարտիկայի մէջ քարանձախայի
ամենախիտ միջոցներ ձեռք առ-
նուած են Թուրքիայէն զնայցող նա-
ւուց դէմ :

Մէսէնճըր լրագրոյն ուղղեալ նա-
մակ մը՝ դարմանք կը յայտնէ թէ
մինչդեռ Ռոսիոյ մէջ ճարտարակա-
նական ժանտախտին դէմ Եւրոպական տէ-
րութիւնը 20-24 օրուան քառանկի-
նա կ'որոշեն , Օսմանեան տէրութեան
քառանկիւնայի տեսչութիւնը 24 ժամ
քառանկիւն օրոշել բաւական կը-
համարի այդ ժանտախտին դէմ , որոյ
ծագած տեղերն անհամեմատաբար
աւելի մեծ են մեղ :

Բանին որ Սե Ժողով Ռուսական նա-
ւահանգիստներէն եկող և Կ. Պօլսոյ
նաւահանգիստին մէջ քառանկիւնայի
թուղթ աւելնէ յետոյ Եւրոպա գը-
նացող նաւերն անդ վերադառնալ Գա-
ռանկիւնայի կ'ենթարկին , կը հետե-
ն թէ Եւրոպա գմեղ բաւական լաւ
արաշտպանեալ չտեսներ Ռոսիոյ ժան-
տախտին դէմ :

Թօթիկէպէն զօրավարն հրաման ը-
րեր է վիտինի բերդերուն քանդակա-
նը ձեռնարկել անմիջապէս՝ ըստ սը-
րամարտութեանց Պէրլինի դաշնագ-
րութեան : Հասարակ դործաւորներ
բնն զատ երեք դունդ զօրք պիտի
մտնակցին այս դործին :

Վիեննայի լրագիր մը կը ծանու-
ցանէ թէ Եւրոպայի երկաթուղւոյն
արտօնութիւնն ստանալ ուղղող Անգ-
ղիական ընկերութիւնը կը խնդրէ Բ-
Դանքն որ Սէլանիկի , Միթրօպօլիսի
և Պօնաֆ-Սարայի մէջ Երկաթուղ-
ւոյ մը շինութեան համար նախ Ա-
ւստրիոյ հետ համաձայնի : Մինչև որ
Բ. Դանքն այս նկատմամբ համաձայ-
նութիւն մը չը գոյացունէ Աւստրիոյ
հետ , յիշեալ Անգղիական ընկերու-
թիւնը չը պիտի կրնայ Եւրոպայի եր-
կաթուղւոյն շինութեան ձեռնարկել :

Վաղըք կը ծանուցանէ թէ Պէ-
տրլիսի վաշայի որդւոց հանած ա-
պրտաւարութեան միջոցն անոնց հետ
միմանալով եղևոնութիւններ դործող
և տեղական բարեկարգութիւնը
խանգարող ֆիւրտ պէյերը Սղերդի
մէջ պատերազմական ատենի մ'առնէ :

մար ինչ որ թերեւ միշտ ընել պարտ
էր , պէտքն ունի մերկանալով իւր
դէմքն և կերպարանելու յանձանօթ
ք. Գիմակն անհատականութիւնն
ընել կը ջնջէ և մի վերադառնալ էակ կընէ
զմարդ որ , այսպէս , ինքզինքն մի
ուելի լայն ու ազատ հորիզոնի մէջ
շարժիլ կ'ըզայ : Մի երկտասարդ տե-
սայ Գիմակաւոր , որ ամենուն դառն
ճշմարտութիւններ կ'ըսէր , զորս ան-
շուշտ հետեւեալ օրն մի և նոյն ան-
ձանց բաւու արիւնքիւնն չլիտի ու-
նենար : Կարծես ճշմարտութեան չե-
ղոր և անապառ դէմքն էր հաղեր և
իւր անհատական դէմքին հետ անե-
րեայի եղած էին երկուստ նկատմունք
և բունի շողմը : Եւ յետոյ , մի հե-
տաքրքրական կէտ կայ : Գիմակաւորն
իւր խօսակցին բորբոքի մերկայնե-
լու արուեստն ունի : Ընկերութեան
մէջ երբ կը խօսիմք , գրեթէ միշտ
մեր վարմունքն ու բառերն կը հա-
մաձայնեցնենք մեր խօսակցին անձ-
նական և ընկերական հանգամանոց

գառութիւններն , և այս պատճա-
ռաւ Սղերդի գաւառը պաշարման
միջակի մէջ դրուեր է :

Թիւիլարի Օսմ. հին պատու Տակէս
էֆէնտին , որ Անատոլիոյ նոր սահ-
մանադրոյն արշաւան համար Բ. Դանքն
պատուիրակ կարգուած էր , Կարնոյ
և Կարսի կողմերը չորս տիկա ժամա-
նակ անցուցելէ յետոյ , ձմեռան պատ-
ճառաւ Կ. Պօլսի վերադարձաւ :

Հիճաղի կողմերը ոսկւոյ հանք մը
գտնուած լինելով , սոյն հանքէն երկու
միտուէ հող նախորդ օրը մայրաքա-
ղաքս բերուեցաւ իւր օրինակ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԵՍՃԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ			
Երէկ իրիկուն դրոշմեցաւ	44. 8		
Ս.յո առաւօտ բացուեցաւ	43.32		
Կէս օրին	43.32		
Բուռն իրի երկաթուղի	Ֆր. 49		
Թոյթադրամ	Իր. 445		
ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂՈՅ			
Կ. Պօլսի 30 Յունվար			
Սոսիթի Եւրոպայի Բանկ	Անգլ. 4.25		
Փոխանակութեան	3.45		
Կ. Պօլսոյ Պանքային	6.45		
Քրիտի Եւրոպայի	5.45		
Փոխ. 1863	Յո. 80		
1865	84		
1869	80		
1872	25		
1873	71		
Թրամաւայ	Օսմ. Իր. 4.85		
ԸՆԹԱՅՔ ԳՐԱՄՈՅ			
30 Յունվար			
Անգլ. Իր. 109.20			
Նարոյնի ոսկի	87.44		
Խնդրի Բանկ	89.48		
Գլուրից	51.10		
Մէտիսի տարբերութիւն	7.32		
Հինգից	423		
Պրինս	486		

Օսմ. Կայսերական Պանքան այսօր
420 զրէ գին որոշած է փոխանակութեան :

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

Երուսաղէմէն յունվար 10 թուով
Լուսոյ խմբագրութեան զրկուած նա-
մակ մը մէջ հետեւեալ բարբարոսա-
կան և սրբապիղծ անցք կը կարգանք
խառնալից Յոյն միաբանութեան ձե-
ռօք դործուած :

« Այս տարի ևս Ս. Յիսուսեան հան-
դէսը մեծ աղմուկներով անցուցինք .
Յոյնք վերջապէս իրենց բնական մի-
լեկրօնութեամբ չափի յարգեն մեր

հետ . ամեն մարդու քով տարբեր
անձն եմք . մեծին քով քննող եմք ,
փոքրին քով արհամարհող և խորխոր
գեղեցիկն քով տկար , տղային քով
անտարբեր և ցուրտ . ո՞վ հմայք , մի
գիմակ որում կը պատահիմք , յան-
կարծ կը ցուցնէ զմեզ ինչ որ եմք ,
կը մերկայցնէ մերներքին մտածմունքն
ու զգացումները . չգիտեմք թէ որո՞ւ
հետ կը խօսիմք . չտեսնեմք թէ մեր
խօսքեր ինչ տալաւորութիւն յառաջ
կը բերեն մեր խօսակցին դէմքին վե-
րայ . Գիմակն անդգայ է և կը պահէ
անողորմաբար իւր գծերու անապա-
միօրինակութիւնը . ուստի կը կորուս-
նեմք մեր ուղեցոյցն , և կը թողումք
որ Գիմակն կարգայ ի մեզ : Եւ այս-
պէս պարահանգէսն մի աւելի ճմա-
րիտ հայելին կը լինի ընկերութեան՝
որ կը ցոյցանայ անդ իւր բաւ և յոռի
կողմերով , իւր միութեամբն ու ա-
ռաքինութիւններով : Գիմակաւորու-
հի մի կըսէր ինձ . « Մեր աղքն դեռ
շատ հեռի է քաղաքակրթութենէ » .

արարողութիւնները և մեր Ս. Պատա-
րաւոր : Երբ Երուսաղէմէն հասանք ի
Բնիկէ՛հմ և ըստ սովորութեան սա-
լայատակի գլխէն « Խորհուրդ մեծ »
կարգելով յառաջացանք , Յոյնք՝ կա-
ռավարութեան զօրքերը դրան քով
չարեւ տուած էին , որպէս զի մեր
մուսաքն արդիւնն ու չթողուն , որ
ներսէն գերոններ հանեն . արդարեւ
մամբը ներսի կողմն արդիւնեցան .
մենք ևս դուրսն արդիւնեցանք հան-
գիւրիւ . որովհետեւ Յոյնք չեն ուզեր
որ կարգաւորվենք մենեմք . մեր մի-
աբանութիւնն՝ արդիւնող զօրքը բա-
նալով և դրան մէջ կեցող Յոյները
յետմղելով անցաւ :

« Դիչերն ևս մեր Ս. Պատարաւորի
միջոցին Յոյներն ուղեցին , որ մեր
կողմէն անցնի իրենց բուրվառը :
Պէտք է գիտնալ , որ այս ևս մի քա-
նի տարուան սովորութիւնն է . մեր
վարդապետներն Այլին մեր կողմի
սանդուղին վերայ կեցան , որ չթո-
ղուն Յունաց սարկաւաղին անցնելը
վասն զի վերը ժողովուրդը խառն
կերպով լցուած էր , կարելի չէր Յու-
նաց ոտնակոխ ընել տալ : Կառավա-
րութեան պաշտօնեայները բուռն
զօրութեամբ մեր վարդապետները
գրկելով դուրս հանեցին , Այլին դը-
րան բերանը 30էն աւելի զօրքեր շա-
րելով ժողովուրդը յետ մղեց , որ
սարկաւաղին անցնի ճանապարհ
ցուի : Այլին մէջ մնացինք եւս ու մեր
թարգմանը , զմեզ ևս շատ քաջըր-
տեցին , որ դուրս ձգեն , չկարողա-
ցան . բայց վերջապէս հինգ վեց մեծ
պաշտօնաւորներ զմեզ կեցած տեղեր-
նիս շրջապատեցին ու ձեռքերնիս
բռնեցին , որ արգելք չլինիմք բուր-
վառին և մեր մէկ քովէն քաշելով
անցուցին սարկաւաղը . երբ Այլին
դուռն ելաւ , ընականաբար ժողու-
վուրդը չափով հանդուրժէր այս սոս-
կալի անիրաւութեան , խուժեց դէպ
ի խնկարկու Յոյն սարկաւաղին վե-
րայ , բայց զօրաց անխնայ հարուած-
ներով յետ մղուեցաւ ու մէկ քա-
ռորի չափ մեր Ս. Պատարաւոր խա-
մանեցաւ աղաղակներէն և խարա-
ղանի ու (տիպճիկ) ներու հարուածող
ձայնէն : Չմոռամք ասել , որ Յունաց
կողմէն ահագին մի փայտ եւ ժամա-
րարին զրկուեցաւ , բայց Աստուած
պահպանեց . եթէ պատահէր , Աս-
տուած մի՛ արասցէ ժամարարին դը-
լուիլ կը ջախջախէր : »

Երուսաղէմի մղեռանդ յոյն կը-
ղերին դործած այս բարբարոսական
պիճալի բռնութեանց վրայ չենք
զարմանար , որովհետեւ իրենց հին բը-
նութիւնն է . բայց ի՞նչ ըսենք տե-

այս գիշեր այս տխուր փորձն ըրի ,
շատեր խօսքուղեցին ինձ և շատեր
խօսեցան այնպիսի կերպով որ անհաշ-
տելի է առ իրական սեռն փոյեղած
յարգանաց հետ . դեռ մեր պարոն-
ներն բաւական չեն սովորած դնահա-
տելի հասկանալ և պատուել կին էակն
այնքան դժուէր աղալար ունին նու-
րա վերայ , որ կը խորժեն թէ կինն ար-
ժանապատուութեան զգացումէ զուրկ
է , և իւրեան հետ միայն հաճոյքի
վերայ կարէ խօսուիլ , և ինչ հաճոյ-
քի . Եւրոպացւոց հանդերձն առեւ
եմք , բայց , իրօք , դեռ հին Արեւել-
ցիներ եմք , կամ աւելի դէշ , ապա-
կանեալ արեւելցիներ . թող գիտցած
ըլան այդ պարոններն , որ Հայոց մէջ
դատարարութեան դործոյն նպաս-
տելու խորհրդով եկած են հոս , թէ
ցորչտի անտես կրնան ու կանգունեն
կինն՝ աղմուկացան այդ մեծ դործին ,
քաղաքակրթութեան անհրաժեշտ
տարրին իւրեանց ամեն ջանքեր կրնան
անօգուտ լինել , և յօդս ցնդել . . . »

զական էշխանութեանց , որք փոխա-
նակ կայսերական հրովարտականով
հաստատեալ վալեմի սովորութիւնն
ընել և իւրաքանչիւր հասարակութեան
նուիրալ օրծեալ իրաւունքն անկողմ
նակարութեամբ պաշտպանելու , Յոյն
կղերին նորամոց մէկ արարողութիւ-
նը կամ որ նոյն է՝ Հայոց իրաւանց
վրայ ոտնձգութիւնը բռնութեամբ
պաշտպանելու կրնեն :

Ո՛ր պիտի երթայ այս անխնա-
նութեան վերջը . . . :

. . . Խմբագիր Տէր .

Կաղաչեմք հետեւեալ աղբը Զեր
աղբօգուտ թերթին մէջ հրատարա-
կել բարեհաճել :

Ա.Զ.Գ.

Թաղական խորհրդոյ կնիքը կոր-
սուած ըլլալով , թէ՛ Աղբային Պատ-
րարքարանի թէ՛ Պօլսոյ թաղերու
պատուարժան Թաղ խորհրդոց և թէ՛
արդոյ հասարակութեան հարկ կը հա-
մարիմք աղբարարել որ խորհրդոյս
ամեն գրութիւնք գիւննի ստորագ-
րութիւնը կը կրեն . եթէ յանուն խոր-
հրդոյս առանց գիւննին ստորագ-
րութեան մի միայն կնքեալ որ և է
գրութիւն ներկայանայ , հարկ է ան-
վաւեր և անընդունելի նկատել :

Ի գիմաց Թաղ խորհրդոյ
Ատենագիր Ատենագետ
Կարապետ Հալաբեան Մերձէկէ Կիւսիսի
79 յունվար 28
Գաղաղ-գիւղ

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԳԻՍ

ԳԻՄԱԿԱՌՈՐ ԵՒ ԱՆԳԻՄՈՐԿ
Ի Նպաստ Սրբոյ Յիսուսեան Կնիքի
Եւ յիշատակի Կնիքի Հայոց .
Հինգալոր թիւ 1/15 փետր. 1879
ՅԵՆՏՐԱՍՏՈ Ի ԲԵՐՍ
Մուտք մէկ Օսմ. ոսկի
Արաքս Եւրոպայի
Ատենագետ .— Փորթ ուղարկան Միքայէլ
էֆէնտի
Գանձապետ .— Պօլսի Անիկոն Կնիքի
Ատենագիր .— Օրմանեան Տօթի . Վիչի
էֆէնտի
Ապրտուական Զեւոր Կնիքի
Բէքմէզեան Կոմիտաս »
Գարապէտեան Կարապետ »
Թաւուրեան Յարութիւն »
Չամիչեան Յովսէփ »
Սամանեան Ա. Գլորդ »
Տիւղեան Սարգիս պէյ :

Մի ծախահարութիւն յանկարծ ընդ-
հատեց իւր խօսքն . վերջին պարն էր
որ կը վերջանայր և պարանցիկը ու
հանգիստեալ , երեկութիւն չընդու-
թեանն զմայլած , կը ծախահարէին
ուժգին : Պատուհաններէն լոյսն կը
թափանցէր սրահին մէջ ու կը տփու-
նէր կարեւու լոյսն .— Գուցի այդքան տիկ-
նայ և ըսի . « Տես հորիզոնին վերայ
ինչպէս կը փայլի արշալոյսն , տկար ու
հեղիկ այդ լոյս , բայց պիտի փարա-
տէ սա երկար գիշերոյն թանձր մու-
թին . այսպէս տկար է սոյն յառա-
ջադիմութեան նշանը որ Հայութեան
երկեց կզրն կը պլպլայ , բայց մի ար-
շալոյս է , հետեւաբար մի անցալի երկ
զօրութիւն , և վատահեղի որ պի-
տի յաջողի վանել խառնը » որքան
և թանձրամտ լինի այն . . . »

1879 յունվար 28 * * *

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

ՏԱՄԱՏԵՆ ԶԱՊԱՐԱՆ

Օրոշակ 463

Հայ, Տաճիկ և Լեւոնյանի տաղա-
րական տառեր իրենց ամեն տեսակ
ներով կը գտնուին պատրաստ խիստ
արժան գիներով:

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԻՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՌՈՑ

ՅՈՐԴԱՆԵՅ Գ. ՄԱՆԵԱՆ

Ի պէս աշխատեմք ձեր հետ

Իզմիր տաղաճարման Գ. Մանեան

Ամեն հայ գրաւորականաց քով կը
գտնուի: Գին 90 սանթիմ:

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՅՈՐԴԱՆԵՅ Մ. ՄԱՆԵԱՆ

Բազմաճանաչ Մամուլեան էֆէն-
տիկ սոյն 140 երեսէ բաղկացեալ նոր
գործը, որ իւր կատարելութեամբ
կը յուսանք թէ մուտ պիտի գտնէ բո-
լոր ազգային վարժարանաց մէջ, իզ-
միր Տէտէեան տաղարանէն հասած
ըլլալով, կը ծախուի Եէնի-ճամբ Զի-
լինկիլէր ճատտէսի թիւ 2, Ս. Ղու-
կասեան գրատունը և ուրիշ գրաւոր-
ականաց քով: Գին 1 ֆրանկ:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հ. Ե. Ս. Ս. Ս. Ս. Ս.

Ի պէս աշխատեմք ձեր հետ

Երբեք չապրիմք

Ի տաղարանի մը Յաւուրեան

Ամեն հայ գրաւորականաց քով կը
գտնուի: Գին 7 զրն:

ԲԱՆԱԼԻ

ՀԱՅԵՐԵՆ ԶԱՊԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Գրեց Մ. ՄԱՆԵԱՆ

Ահա տալիս գեղեցիկ մէթոտ մը,
որ Մամուլեան էֆէնտիկ աշխատա-
սիրութեամբ մուտ գտնելով մայրենի
ընդուն ուսման մէջ, կառավարող-
աշխատանքը շարադիր լինելու, չը-
պատկարի որ անոնք քերականութեան
տաղտկար շրջանէն անցնին:

Այս գրքովը Զմիւռնիոյ Տէտէեան
եղբայր տաղարանէն ի լոյս ընծայ-
ւելով, կը ծախուի Եէնի ճամբ Զիլին-
կիլէր ճատտէսի թիւ 2, Ս. Ղուկաս-
եան գրատունը և ուրիշ գրաւորա-
նաց քով: Գին 50 սանթիմ:

ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ

Թէ ինչ ԶԱՆԵՅԱՆ ՊԵՐԼԻՆԻ
ՎԵՐԶՈՒՄԻՆԻ

Հայ պատուիրակութեան քար-
տուղար—Թարգման Պ. Մինաս Զերա-
զի սոյն հեղինակութեան առաջին
տաղաճարմանն սպասած լինելով,
երկրորդը հրատարակուած է յաւել-
ւածով մը:

Ամեն հայ գրաւորականաց քով կը
գտնուի: Գին 75 սանթիմ:

ԹՈՒՂԹՈՒ ՄԱՐԿԱՆՈՒ ՍԱՐԳԵՅԵԱՆ
ՀԱՅՈՑ ՈՇԵՐԱՆԻ, ԱԶԳԻ ԵՒ ԵՆԵՎԵՅՈՒ
ԱԶԳԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Առ պատուիրակաց պատուական

Տէր Երեմիա Արքեպիսկոպոս Ամուս

Եւ Պատրիարք Օսմանեան Հայոց

Ամեն Երեսնա Սրբազան Պատրի-
արքի հրամանաւ գրուած և Արամ-
եան տաղարանէն գեղեցիկ տաղաճար-
մանով ի լոյս ընծայուած 160 երե-
սէ բաղկացեալ գիրք մ'է, որուն մէջ
Պատուարժան հեղինակը համարեալ
խօսած է ոչ միայն Հայոց աշխարհի,
ազգի և եկեղեցւոյ պատմութեան վը-
րայ, այլ և Հայոց հին ընկերակամու-
թեան և վաճառականութեան, նոյն-
պէս և Հայաստանի բնական գրից և
Հայոց այժմեան բարբառներուն վրայ
տրամադրուած է:

Կը ծախուի Եէնի ճամբ Զիլինկիլ-
էր ճատտէսի թիւ 2 Ս. Ղուկասեան
գրատունը և ուրիշ գրաւորականաց
քով: Գին մէկ մէճիս արծաթ:

ԻՄԲԱՅԻՐ—ՏԵՐՈՒՆ

Կ. Ս. ԻՄԵՐԻՅԵԱՆ



ՇԻՐԲԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ
ՇՈՒԿԵՆԱԿԱՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1879 ՅՈՒՆՎԱՐ 1 ԵՐԿՈՒՇԱԲԻ ՕՐԷՆ ՄԿՍԵԱՆ

ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ 31

ԲԱՍՏՈՒՆ ԻՋՆՈՂ ՇՈՒԿԵՆԱԿԱՆԵՐԸ

Ժամ	Երբեք աշխատեմք ձեր հետ	Թի-
2 15	Եէնիմահալլէն Մէլալար, Պէյլիք, Թարապիս, Եէնիք, Եէնիք, Սթանբուլ, Եւրոպայի Պէյլիք, Բ. Հիսար, Պէյլիք, Եւրոպայի Պէյլիք, Բ. Հիսար, Պէյլիք:	32
3	Եէնիմահալլէն Մէլալար, Պէյլիք, Թարապիս, Եէնիք, Եւրոպայի Պէյլիք, Բ. Հիսար, Պէյլիք:	20
4 30	Եէնիմահալլէն Մէլալար, Պէյլիք, Թարապիս, Եէնիք, Սթանբուլ, Եւրոպայի Պէյլիք, Բ. Հիսար, Պէյլիք, Ար-նաւ, Գուր, Օրթաք, Պէյլիք:	18
5 30	Մէլալար, Պէյլիք, Թարապիս, Եէնիք, Եւրոպայի Պէյլիք, Բ. Հիսար, Պէյլիք, Գուր, Օրթաք, Պէյլիք:	32
6 30	Եէնիմահալլէն Պէյլիք, Թարապիս, Պէյլիք, Եէնիք, Եւրոպայի Պէյլիք, Բ. Հիսար, Պէյլիք, Եւրոպայի Պէյլիք, Բ. Հիսար, Պէյլիք:	2
8	Բ. Հիսար, Գուր, Օրթաք, Եէնիք, Եւրոպայի Պէյլիք, Բ. Հիսար, Պէյլիք, Արնաւ, Գուր, Օրթաք, Եէնիք, Եւրոպայի Պէյլիք:	20
9 45	Մէլալար, Պէյլիք, Թարապիս, Եէնիք, Եւրոպայի Պէյլիք, Բ. Հիսար, Պէյլիք, Եւրոպայի Պէյլիք, Բ. Հիսար, Պէյլիք:	22

Արնաւ, Գուր, Օրթաք, Եէնիք, Եւրոպայի Պէյլիք:

2 15	Արնաւ, Գուր, Օրթաք, Եէնիք, Եւրոպայի Պէյլիք:	28
2 45	Արնաւ, Գուր, Օրթաք, Եէնիք, Եւրոպայի Պէյլիք:	25
3 15	Պէյլիք, Արնաւ, Գուր, Օրթաք, Եէնիք, Եւրոպայի Պէյլիք:	22
4 15	Արնաւ, Գուր, Օրթաք, Եէնիք, Եւրոպայի Պէյլիք:	28
4 30	Արնաւ, Գուր, Օրթաք, Եէնիք, Եւրոպայի Պէյլիք:	21
4 30	Արնաւ, Գուր, Օրթաք, Եէնիք, Եւրոպայի Պէյլիք:	21
4 30	Արնաւ, Գուր, Օրթաք, Եէնիք, Եւրոպայի Պէյլիք:	21
4 30	Արնաւ, Գուր, Օրթաք, Եէնիք, Եւրոպայի Պէյլիք:	21
4 30	Արնաւ, Գուր, Օրթաք, Եէնիք, Եւրոպայի Պէյլիք:	21
4 30	Արնաւ, Գուր, Օրթաք, Եէնիք, Եւրոպայի Պէյլիք:	21

Արնաւ, Գուր, Օրթաք, Եէնիք, Եւրոպայի Պէյլիք:

2 15	Պէյլիք, Թարապիս, Եէնիք, Եւրոպայի Պէյլիք, Բ. Հիսար, Պէյլիք, Եւրոպայի Պէյլիք, Բ. Հիսար, Պէյլիք:	21
2 45	Արնաւ, Գուր, Օրթաք, Եէնիք, Եւրոպայի Պէյլիք:	2
2 30	Բ. Հիսար, Գուր, Օրթաք, Եէնիք, Եւրոպայի Պէյլիք:	33



ԶՐԶԱՆ

Ամերիկայի Տրանսպորտ
մեծ և փոքր, երկա-
թէ հաստատուն խող-
վանքով թէ ջրային
ներու և թէ խողովակ
հորերու համար ամեն
գնեքով կը ծախուի, Կ.
Պոլիս Ղալաթիա Մի-
նասեան և ընկերաց
Ամերիկայի մաղաղան:



ԿԱՐԻ ԳՈՐԾԻՔ

Փոքր և մեծ կոշտած ձեռ-
քով գործող ու անքակ կար կարող
գործիքը ամեն տեսակ կար մեծ գիւ-

րութեամբ կը կարէ ու գինն ալ ա-
մեն է, երաշխաւորութեամբ կը տըր-
ւի, աւելանալով կը շահուի ու կա-
րել չի կարողանալ զատ կը արուի. կը
ծախուի Կ. Պոլիս Ղալաթիա Մինաս-
եան և ընկերաց Ամերիկայի մաղաղան:



ՍԱՌԹԵՆԻ ՇԻՐՈՐ

Յայտնի է որ երաշխաւոր ծնանքէն
մինչ երեք տարեկան հասակը գրե-
թէ շարունակ փոքից ցաւ. փոքրաբու-
թիւն, ստամոքսի անհանգստութիւն,
անքուն անալ, ջղային գրգռութիւն
և այլն կուրենան, մանաւանդ ախտ
հանելու միջոցին, և այս ներդրութիւն
ներն ալ աւելի կը ստատկանան ամառ-
ւան տաք եղանակին: Սառթենի Շի-
րորը վերջնապէս դժուարութեանց ա-
մենուն ալ առաջը կառնէ ու կը բը-
ժըլկէ, որով երաշխաւոր կը հանգչի ու
կը զորանայ յուրաքանչեւ մեծ իւր
ծնողաց: Գործածողները շատ գոհ
են: Բազմապէս կը փորձուի, գինն ա-
մեն է. նորածին երաշխաւոր կաթի-
նով կը արուի, վնաս միայն վեր եղ-
ղին օրը երեք անգամ գրգռուի. կը
ծախուի Կ. Պոլիս Ղալաթիա Մինաս-
եան և ընկերաց Ամերիկայի մաղաղան:

Լրագիրս ամեն օր կը հրատարակուի
բաց ի կիրակի և տոն օրերէ:

Բաժանորդագրութեան տեղն է Ղա-
լաթիա Սահողաճըլար ճատտէսի թիւ
198, Նորո խան Մալիսի խմբագրատու-
նը: Իսկ դաւանաց միջ հետեւեալ հոգա-
րարանաց դրամներով:

- ՉՄԻՆԻՆԻԱ. Ստեփան Էֆ. Տէտէեան.
- ՆԻԿԱՄԻՆԻԱ. Խորով » Իսիդորեան.
- ՊՐԻՍՄԱ. Ստեփան Էֆ. Թանկեան.
- ՌԱՏԱՍՈՒՍ. Արթ. Տ. Արիստակէս ա-
ւագ քահանայ Ֆիլան.
- ԱԳՐԱՆՈՒՄՈՒՍ. ՍԱՄԱՆԻՆ.
- ՏՐԱՊԵՏԻԱ. ՍԱՄԱՆԻՆ.
- ԵՒԴԱՅԻՍ. ԵՒԴԱՅԻՍ.
- ԽԱՐԵՐԻՆ. ԵՒԴԱՅԻՍ.
- ԵՐԶՆԻԱ. Թադէոս Էֆ. Բաղրատունի.
- ԿԱՐԻՆ. Կարապետ » Զաքարեան.
- ՄԱՐԻՆ. Մարտիկ » Փօթիկեան.
- ՎԱՆ.
- ԲԵՐԻՍ. Սեդրակ » Խորանեան.
- ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. Թովմաս Էֆ. Թադ-
ճեան.
- ԵՂԵՍԻԱ. ՄԱՐԻՆ.
- ՅՈՐԴԱՆԵՅ. Յորհան աղա Ս. Յէրհան-
եան.
- ՏԳՐԻՍ. Պ. Նիկողոսյան Տ. Ղեւոնդեան.
- ԿԱՆԱՍՏԱՆ. Պետրոս աղա Հէրմեան: